

լով: — Առայժմյալքի արհմանաշինքուն ընկերու-
թեան գանձէն խաւարած է 200 բարի: — Երեք
գարջ նպատակ ընդունած է 4800 զւ. 25 ֆ., երկու
աղբատիկ աշակերտ՝ 84 զր. 40 ֆ.: — Արդարա-
պահի այլեւայլ գիւղերուն մէջ ընկերութիւնը հինգ
գարջ բացած է իւր ծախքով: այս գարջներուն
մէջ կրթութիւն տաւող մանկանց թիւը հասած է
177ի: — Ընկերութիւնը հաստատած է նաեւ 3
գաւգարան-ընթերցարան՝ գլխաւորաբար պարզեւ
ընդունած գրքերով: — Ունի կար ու ձեռք արհե-
տանոց մը, մանկապարտեղ մը: — Գլխաւորաբար
գարջադարձութեան արհետանոցը հարկ է եղեր
փակել:

Ընկերութիւնն այս տարի ունեցած է 57 տա-
րիկան անդամուհի, 6 պատասխար անդամ եւ 36
մշտնջենական անդամուհի եւ բազմաթիւ նախա-
տու անձինք: Այս անկախութեամբ է, որ կրցած է
իր 21.000 զւ. ծախքը գոցել ետքը՝ դրամագլխոյն
վայս ալ փոքրիկ յաւելում մ'ընել:



ՅԱՆՎԱՐԻ ԵՄԵՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վիեննա, 25 Հոկտեմբեր 1900:

Երեք մեծ պետութիւններ զբաղած
էին եւ են վարչական ընտրութիւններով,
Եւրոպայի մէջ Աստրիա, Ամերիկայի մէջ
Միացեալ Նահանգներ: Առաջնոյն մէջ
պետութիւնը զուր կը սպասէ համընդ-
խութիւն գոյացընել այլեւայլ ցեղերու շա-
հերուն մէջ. երկրորդին մէջ հասարակա-
պետականք կը ջանան պահել իրենց մեծա-
մասնութիւնը, իսկ Ռամկավարականք
կ'աշխատին իրենց ընտրելին՝ Բրիտանը՝ գա-
հերեց ընել:

Անգղիա եւրոպոյ մեծ պետութիւնն էր
որ զբաղած էր ընտրութեամբը, եւ շուտ
մ'աւարտեց այս գործը: Վարչութիւնը կամ
Պահպանողականք կրկին մեծամասնու-
թիւն ստացան՝ 132 ձայնի առաւելու-
թեամբ: Այն յոյսը թէ նոր ընտրութեամբը
ստիպուէր ներկայ դարիւնը հրաժարիլ,
որով հարաւային Ափրիկէի ճակատագիրը
փոփոխութիւն մը կրէր, ի դերեւ ելաւ
ատով:

Հարաւ-Ափրիկէի պատերազմը հոկտ.
11ին միշտ տարի մը բուրդեց. արդիւնքն
երկու հաարակապետութեանց անգղիա-
կան ստացուածք ըլլաւն է: Պատերազմը
պաշտօնապէս լմնցած կը համարուի, թէն
փոքրիկ խմբեր տակաւին օստտութեամբ

կը մղեն լեռնցոյ կողմ մը՝ աւերելով հա-
ղորդութեան գծերը, են: Մէկ կողմանէ
Բուլլէր դարձաւ Անգղիա, եւ Ռոբերտս ալ
մօտերս պիտի դառնայ, միւս կողմանէ
Կրիզէր Եւրոպայ հասնելու վրայ է, ուր
կանխած են արդէն այլեւայլ վարչական
անձինք Տրանսվալի: Պորթուգալեան
Ափրիկէ ապաստանող ցուրերու թիւը հա-
սած է իբր 10.000 հոգոյ:

Հինական խնդիրը նոյն անորոշ վի-
ճակի մէջ է, նաեւ Վալդերսէի Պէզինգ
հասնելին ետքը: Բանակցութիւնք սկսած
են, եւ ուս ղեսպաւն՝ որ բանակին հետ
Յիէնցին քաշուած էր, ետ դարձաւ անոնց
մասնակցելու. քայց արդիւնք մը չտեսնու-
եցաւ տակաւին: Մեծ նշանակութիւն կը
տրուի մօտերս հրատարակուած դաշնա-
գրին, զոր Կերմանիա կընքէ Անգղիոյ հետ,
եւ որուն նպատակն է պահել Հինաստանի
ամբողջութիւնն եւ վաճառականութեան
համար «բաց դուռ», պահենշիւ ամէն տեղ:

Հինական իրաց հետեւութեամբ Կեր-
մանիա կայսրութեան քաղաքագիր փո-
փոխութիւն ունեցաւ: Ժեյր իշխան Հոհեն-
լոյէ հրաժարելով տեղին անցաւ Բիւլով, որ
Կայսեր աջ թաղուն էր յատկապէս չինա-
կան խնդրոյն մէջ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՆԿՈՒՄՆԱԿԱՆ — Թղթակցութիւն Արգարու եւ Զրիս-
տոսի ըստ Նորագիւտ արժանագրութեան Նիսի-
տոսի. 321:

ԼԵՃՈՒՄՆԱԿԱՆ — Արաքիւնի գաւառաբա-
րաւոր. 328:

ՀԱՆՈՍՄԱՆԱԿԱՆ — Ուսումնական ուղեւորութիւն Բէլք
եւ Լէման գիւտականաց. 335:

ՄԱՏՆԵՐՈՍՄԱՆԱԿԱՆ — Գէորգայ Պիսիդայ վեց-
օրեայ. 340:

ՊԱՏՄԱՆԱԿԱՆ — Նոյնարեթուպոլսոյ քաղաքային
շեքքին կարգադրութիւններ — դաշնագրութիւնք
— պարտաւթընք — կտակ. 346:

ՆՈՒՄԵՐԱԿԱՆ

ՆՈՐ ՀՐԱՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ. 350:

ԲԱՆԿԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 352:



ՀՐԱՅԱՐԱՆՈՒԹ ԵՒ ՊԱՏՄԱՆԱԿԱՆ ՆՈՍՄԱՆՈՐ

Կ. ՌԵՍՈՒՍԵԼ Կ. ՊԱՐԱՆՉ

ՎԻԵՆՆԱ, ՄԻԹԵԼԱՐԵԱՆ ԶՊԱՐԱՆ